# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի քաղաքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՔՆ-ՊԸԾՁԲ-16/23 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2016 թվականի հոկտեմբերի 20-ին կնքված N ՔՆ-ՊԸԾՁԲ-16/23 պայմանագրում 2018 թվականի փետրվարի 16-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1717-Ն որոշում: |
| Փոփոխության նկարագրություն | ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի քաղաքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքված N ՔՆ-ՊԸԾՁԲ-16/23 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցի տրամադրում: |
| Փոփոխության հիմնավորում | ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 36-րդ կետի 12-րդ ենթակետ և Պայմանագրի 4.1.1 և 7.3 կետեր: |

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
## 20.10.2016 թ.կնքված N ՔՆ-ՊԸԾՁԲ-16/23 պայմանագրի

ք. Երևան 16 փետրվարի 2018թ.

<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից և <<Արման-Թաման>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Մ.Մովսիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 2016 թվականի հոկտեմբերի 20-ին կնքված N ՔՆ-ՊԸԾՁԲ-16/23 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1.1 և 7.3 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կատարողի կողմից Պայմանագրի N 1 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 2018 թվականի ընթացքում մատուցման ենթակա ծառայությունների գինը սահմանել **1 142 000 (մեկ միլիոն մեկ հարյուր քառասուներկու հազար)** ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

1.2 Հաստատել վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորոգրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելված N 1-ը բաղկացած 1 (մեկ) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**Պ ա տ վ ի ր ա տ ու**

<<ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտեի
աշխատակազմ>> պետական
կառավարչական հիմնարկ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012557
ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

Ա. Մկրտչյան ---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ ա տ ա ր ո ղ**

<<Արման-Թաման>> ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Գավառ մ/ճ
Հ/Հ 11500844540100
ՀՎՀՀ 08417115

Տնօրեն՝

Մ.Մովսիսյան ---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
20.10.2016թ. կնքված ծառայությունների մատուցման
N ՔՆ-ՊԸԾՁԲ-16/23 գնման պայմանագրի
16.02.2018 թ. կնքված N 2 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

## (Բաժին 08, խումբ 02, դաս 03, ծրագիր 01)

Հ դրամ

| Աշխատանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն | - | - | | 342 000 | 342 000 | 342 000 | 912 000 | 912 000 | 912 000 | 1 142 000 | 1 142 000 | 1 142 000 | 1 142 000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

### Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**Պ ա տ վ ի ր ա տ ու**

<<ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտեի
աշխատակազմ>> պետական
կառավարչական հիմնարկ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012557
ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

Ա. Մկրտչյան ---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ ա տ ա ր ո ղ**

<<Արման-Թաման>> ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Գավառ մ/ճ
Հ/Հ 11500844540100
ՀՎՀՀ 08417115

Տնօրեն՝

Մ.Մովսիսյան ---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.